Երաժշտության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից. I ունկնդրման մաս , II փակ և բաց առաջադրանքներ, որոնք ներկայացված են առանց ունկնդրման նյութերի:

Ունկնդրման մասի համար հատկացված է սահմանված ժամանակ: Թեստի էլեկտրոնային բուկլետում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան հրահանգում նշված է առաջադրանքը կատարելու համար հատկացված կոնկրետ ժամանակը:

Մնացած ժամանակը ըստ Ձեր հայեցողության բաժանեք թեստի II մասի առաջադրանքները կատարելու համար:

Թեստի առավելագույն միավորն է՝ 70:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն :

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

I մաս՝ ունկնդրում

Ունկնդրման մասն ընդգրկում է տասը առաջադրանք:

Առաջադրանքներ №1-6:

<u>Հրահանգ:</u> Առաջին վեց առաջադրանքում յուրաքանչյուրի համար հատկացված է մեկ երաժշտական հատված և երկու հարց: Յուրաքանչյուր հարցին կից տրվում է չորս ենթադրական պատասխան: Ընտրեք և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք մեկ ճիշտ պատասխան:

Երաժշտական հատվածը լսում եք երկու անգամ: Առաջին և երկրորդ ունկնդրումների միջև դադարը կազմում է 20 վայրկյան:

Նախքան յուրաքանչյուր առաջադրանքի համար հատկացված երաժշտական հատվածի ունկնդրումը տրվում է 10 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը կարդալու համար:

Լսեք երաժշտական հատվածները և պատասխանեք համապատասխան հարցերին:

Առաջադրանքները տրված են հաջորդ էջից:

(2) **Առաջադրանք №1.**

Նախքան առաջին երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (1.1 և 1.2).

1.1 Ո՞ր տարածաշրջանի երգ է:

ա) Կախեթիի,

բ) Գուրիայի,

գ) Սամեգրելոյի,

դ) Ռաճայի:

1.2 Ի՞նչ ժանրի երգ է:

ա) Ծիսական,

բ) Խնջույքի,

գ) Պարային,

դ) Աշխատանքային:

(2) **Առաջադրանք №2.**

Նախքան երկրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (2.1 և 2.2).

2.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Գիա Ղանչելի,

բ) Վաժա Ազարաշվիլի,

գ) Բիձինա Կվերնաձե,

դ) Ինոլա Գուրգուլիա:

2.2 Ո՞ր ֆիլմից է երաժշտությունը:

ա) «Դաթա Թութաշխիա» („დათა თუთაშხია“),

բ) «Զոլզում» („ მონანიება“),

գ) «Ինչ երիտասարդություն է» („ღიმილის ბიჭები“),

դ) «Ճպուռ» („ჭრიჭინა“):

(2) **Առաջադրանք №3.**

Նախքան երրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (3.1 և 3.2).

3.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Կառլ Վեբեր,

բ) Ֆելիքս Մենդելսոն,

գ) Յոհաննես Բրամս,

դ) Ռիխարդ Վագներ:

3.2 Ո՞ր կատարողական խումբն է կատարում հատվածը:

ա) Լարային նվագախումբը,

բ) Հարվածային երաժշտական գործիքների նվագախումբը,

գ) Սիմֆոնիկ նվագախումբը,

դ) Փողային երաժշտական գործիքների նվագախումբը:

(2) **Առաջադրանք №4.**

Նախքան չորրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (4.1 և 4.2).

4.1 Ո՞ր օպերայի հատվածն է հնչում:

ա) «Ֆիգարոյի հարսանիքը»,

բ) «Բոհեմ»,

գ) «Սևիլյան սափրիչը»,

դ) «Ռիգոլետտո»:

4.2 Ո՞ր օպերային ձայնն է կատարում:

ա) Բաս,

բ) Բարիտոն,

գ) Տենոր,

դ) Կոնտրտենոր:

(2) **Առաջադրանք №5.**

Նախքան հինգերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (5.1 և 5.2).

5.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Գեորգ Ֆրիդրիխ Հենդել,

բ) Անտոնիո Վիվալդի,

գ) Յոհան Սեբաստիան Բախ,

դ) Արկանջելո Կորելլի:

5.2 Ո՞ր երաժշտական գործիքն է մենակատարում:

ա) Ջութակ,

բ) Ալտ,

գ) Թավջութակ,

դ) Կիթառ:

(2) **Առաջադրանք №6.**

Նախքան վեցերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին (6.1 և 6.2).

6.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:

ա) Սերգեյ Պրոկոֆև,

բ) Բելա Բարտոկ,

գ) Առնոլդ Շոնբերգ,

դ) Ջորջ Գերշվին:

6.2 Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է:

ա) Նոկտյուրն,

բ) Տոկատա,

գ) Պրելյուդ,

դ) Էտյուդ:

(1) Առաջադրանք №7.

Հրահանգ: Ունկնդրեք երաժշտական հատվածները, նոտային գրառման մեջ տրված չորս տարբերակից ընտրեք ունկնդրած լադի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք ճիշտ պատասխանը:

Լադը լսեք երկու անգամ:

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար:



(1) Առաջադրանք №8.

<u>Հրանանգ:</u> Լսեք երաժշտական հատվածը, նոտային գրառման մեջ տրված չորս տարբերակից ընտրեք ունկնդրած ռիթմիկ ֆիգուրացիայի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք ճիշտ պատասխանը:

Ռիթմիկ ֆիգուրացիան լսեք երկու անգամ:

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար:



(5) Առաջադրանք №9.

Երաժշտական թելադրություն:

<u>Հրահանգ:</u> Ունկնդրեք մեղեդին և գրառեք նոտային համակարգում: Մեղեդին միաձայնային է, ութ տակտանոց և տրված է մեկ տոնայնության մեջ: Այն լսելու և գրելու համար տրվում է 15 րոպե: Մեղեդին լսում եք ձայնագրությամբ հինգ անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե:

Թելադրությունը տրված է Ռե մաժոր (D dur) տոնայնության մեջ:

<u>Ձեր կողմից գրառված մեղեդին տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտային համակարգ:</u>

(13) Առաջադրանք №10.

Երաժշտական ստեղծագործության վերլուծություն

Հրահանգ: Լսեք երաժշտական ստեղծագործությունը: Վերլուծեք այն ձայնագրության և նոտային գրառման հիման վրա:

Երաժշտական ստեղծագործությունը լսում եք երեք անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե: Նախքան ունկնդրելը տրվում է 30 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը վերանայելու համար:

Հարցերը դիտեք հաջորդ երկու էջի վրա:

(2) 1. Ո՞ր գործիքային ժանրին է պատկանում տրված ստեղծագործությունը: Հիմնավորեք ձեր կարծիքը:

(3) 2. Որոշեք.

ա) ստեղծագործության տոնայնությունը,

բ) ստեղծագործության երաժշտական ձևը,

գ) ստեղծագործության վերջում (23-25 տակտերում) տրված կադանսի մեջ մտնող ակորդների հարմոնիկ (ներդաշնակ) ֆունկցիաները:

(3) 3. Բնութագրեք, թե ինչպես է զարգանում ստեղծագործության գեղարվեստա-հուզական կողմը, վերլուծեք և հակիրճ նկարագրեք, թե երաժշտական արտահայտչականության ո՞ր միջոցներն են (ինչպիսի՞ մեղեդի, ռիթմ, տեմպ, տեմբր (հնչերանգ), հարմոնիա (ներդաշնակություն), լադատոնայնություն, ֆակտուրա և այլն) հատկապես կարևոր այս ստեղծագործության գեղարվեստական բովանդակությունը ստեղծելու համար:

(2) 4. Երաժշտական բնութագրիչների հիման վրա, որոշեք ստեղծագործության ստեղծման դարաշրջանը և կոմպոզիտորի ինքնությունը:

(3) 5. Համառոտ բնութագրեք կոմպոզիտորի ստեղծագործությունները և նրա նորարարական նվաճումները երաժշտության մեջ: Քննարկեք ստեղծագործության պատմամշակութային համատեքստը: Հեղինակի երաժշտական ժառանգության մեջ նշեք այն ժանրի նշանակությունը, որին պատկանում է ունկնդրած ստեղծագործությունը և նկարագրեք ժանրի զարգացման փուլերը:

Երաժշտական երկի նոտային գրառումը դիտեք հաջորդ երկու էջում:


Largo
p
espressivo
4
8


12
16
stretto
f
dim.
p
20
smorz.
pp

II մաս

Առաջադրանքներ №11-28.

Հրահանգ: Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրված պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ. պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի ուրիշ նշում՝ հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվում էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկի վրա նշված պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը, որն ուղղել եք: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

Առաջադրանք №11.

Ո՞ւմ պոեմի հիման վրա է գրվել «Նենգ Դարեջանը» օպերայի լիբրետոն:

ա) Ակակի Ծերեթելիի,

բ) Վաժա Փշավելայի,

գ) Գրիգոլ Օրբելիանիի,

դ) Իլիա Ճավճավաձեի:

Առաջադրանք №12.

Ի՞նչ է նշանակում կոնտրապունկտ (ձայնակարգություն):

ա) Երաժշտական արտահայտության (ֆրազ) կրկնություն տարբեր բարձրության հնչյուններից,

բ) Երկու կամ ավելի անկախ մեղեդային գծերի հարմոնիկ միաձուլում,

գ) Երաժշտական արտահայտության (ֆրազ) կամ մեղեդու ձևափոխված կրկնություն,

դ) Մեղեդային արտահայտության (ֆրազ) կամ ռիթմիկ ֆիգուրացիայի բազմանգամյա կրկնություն:

Առաջադրանք №13.

XX դարի ո՞ր կոմպոզիտորն էր էթնոերաժշտագետ:

ա) Առնոլդ Շոնբերգը,

բ) Յանիս Քսենակիսը,

գ) Դմիտրի Շոստակովիչը,

դ) Բելա Բարտոկը:

Առաջադրանք №14.

Ի՞նչ է մեսսան:

ա) Հոգևոր կամ աշխարհիկ պատմությունն արտացոլող ստեղծագործություն մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար, առանց թատերական բեմադրության,

ծ) Վոկալ-գործիքային ստեղծագործություն, որը հիմնվում է Ավետարանի տեքստի վրա և արտացոլում Քրիստոսի չարչարանքները,

գ) Աղոթքի տեքստերի վրա կառուցած բազմաձայնային երգասացության ցիկլ, ստեղծված կաթոլիկ պատարագների համար,

զ) Վոկալ-գործիքային խոշոր ստեղծագործություն, լիբրետոյով և թատերական բեմադրությամբ:

Առաջադրանք №15.

Ո՞ր երգիչն է կատարում դաստիարակ Մարիայի դերը «Երաժշտության հնչյունները» կինոմյուզիքլում:

ա) Բարբարա Սթրեյզանդը,

բ) জուդի Գառլանդը,

գ) জուլիա Էնդրյուսը,

դ) Մարնի Նիքսոնը:

Առաջադրանք №16.

Ո՞ր երաժշտական ժանրն է կապված բնության, գյուղի և հովիվների կյանքն արտացոլող պատկերների հետ:

ա) Բարկարոլ,

բ) Պաստորալ,

գ) Բալլադ,

դ) Ռապսոդիա:

Առաջադրանք №17.

Ո՞ր սիմֆոնիկ ստեղծագործությունն է պատկանում իմպրեսիոնիստական ուղղությանը:

ա) Սիմֆոնիա «Տիտան»,

բ) Ցիկլ «Նոկտյուրններ»,

գ) Սյուիտ «Պեր Գյունտ»,

դ) Սիմֆոնիա «Նոր աշխարհից»:

Առաջադրանք №18.

Թվարկած խմբերից ո՞րն է *սխալ*:

ա) Կանացի երգչական ձայներն են՝ սոպրանո, մեցցո-սոպրանո, կոնտրալտո:

բ) Ռոմանտիկ կոմպոզիտորներն են՝ Շումանը, Վեբերը, Վագները:

գ) Գործիքային ցիկլի նմուշներ են՝ էքսպրոմտը, կվարտետը, սիմֆոնիան:

դ) Մետաղյա փողային երաժշտական գործիքների խմբին են դասվում՝ գալարափողը, շեփորը, տուբա:

Առաջադրանք №19.

Վրաստանի ո՞ր տարածաշրջանի երգերին է բնորոշ բուրդոնական տեսակի բազմաձայնությունը:

ա) Կախեթիի,

բ) Սվանեթիի,

գ) Սամեգրելոյի,

դ) Գուրիայի:

Առաջադրանք №20.

Ո՞ր երաժշտական ժանրը *բնորոշ չէ* XX դարի 10-20-ական թվականների վրացական երաժշտությանը:

ա) Ռոմանսը,

բ) Երգչախմբային երգը,

գ) Բալետը,

դ) Օպերան:

Առաջադրանք №21.

Յոհան Սեբաստիան Բախի կլավիրային ստեղծագործությունների ո՞ր ցիկլի մեջ է կիրառված 24 տոնայնություն:

ա) Ֆրանսիական սյուիտններ,

բ) Լավ տեմպերացված կլավիր,

գ) Անգլիական սյուիտներ,

դ) Երկձայն և եռաձայն ինվենցիաներ:

Առաջադրանք №22.

Ո՞ր երաժշտական տերմինն է նշանակում նոտային գրառման մեջ նոտայի, ակորդի կամ դադարի երկարաձգումը:

ա) Sforzando,

բ) Fermato,

գ) Accelerando,

դ) Piano:

Առաջադրանք №23.

Ո՞ր երաժշտական գործիքի սոլո պարտիայով է սկսվում Զաքարիա Փալիաշվիլիի «Դաիսի» օպերայի նվագախմբային նախերգանքը:

ա) Կլառնետի,

բ) Գալարափողի,

գ) Հոբոյի,

դ) Տրոմբոնի:

Առաջադրանք №24.

Ո՞ր քաղաքի հետ է կապված Յոհան Սեբաստիան Բախի գործունեության վերջին ժամանակաշրջանը:

ա) Արնշտաթի,

բ) Այզենախի,

գ) Վայմերի,

դ) Լայպցիգի:

Առաջադրանք №25.

Ո՞ր կոմպոզիտորին էին անվանում «Վալսի արքա»:

ա) Կարլ Վեբերին,

բ) Յոհան Շտրաուսին,

գ) Ֆրանց Շուբերտին,

դ) Ռիխարդ Շտրաուսին:

Առաջադրանք №26.

Ի՞նչն է կոչվում կադանս:

ա) Երաժշտական կոմպոզիցիայի ստեղծումը տարբեր ստեղծագործությունների հատվածներից,

բ) Երաժշտական թեման, որը մի քանի անգամ կրկնվում է ռոնդոյում,

գ) Հարմոնիկ շրջադարձը, որով ավարտվում է երաժշտական ստեղծագործությունը կամ նրա մասը,

դ) Երաժշտական ձևի փոքրագույն կառուցվածքային միավորը:

Առաջադրանք №27.

Ո՞ր օպերայի կերպարն է Ցերլինան:

ա) «Բոհեմ»,

բ) «Ազատ հրաձիգը»,

գ) «Ռիգոլետտո»,

դ) «Դոն Ժուան»:

Առաջադրանք №28.

Կոմպոզիցիայի ո՞ր հնարքն է ներկայացված երաժշտական հատվածի նոտային գրառման մեջ:

ա) Իմիտացիա,

բ) Օստինատո,

գ) Ստրետա,

դ) Դոդեկաֆոնիա:



Առաջադրանքներ №29-32.

Կառուցում նոտայից

Հրահանգ: Կառուցեք *ֆա դիեզ* նոտայից տրված ինտերվալը, եռահնչյուն և քառահնչյուն ակորդները, լադը և գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտաների համակարգի վրա:

(1) 29. Մեծ սեքստա,

(1) 30. Մաժորային սեքստակորդ,

(1) 31. Փոքր մինոր սեպտակորդ,

(1) 32. Մեղեդային մինոր:

Առաջադրանքներ №33-35.

Համապատասխանության որոշում

Հրահանգ: Առաջադրանքում տրված է թվարկացանկի երկու սյունակ: Որոշեք համապատասխանությունը դրանց տրվածության միջև: Ձախ սյունակի յուրաքանչյուր տվյալին (1, 2, 3) համապատասխանում է աջ սյունակի միայն մեկ տվյալ (ա, բ, գ, դ, ե): Յուրաքանչյուր համապատասխանությունը պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում նշեք X նշանով: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

(3) **Առաջադրանք №33.**

Որոշեք համապատասխանությունը կինոնկարների և դրանց երաժշտության հեղինակների միջև.

1. «Շերբուրգյան անձրևանոցներ»,	ա) Նինո Ռոտա,
2. «Մի անգամ Ամերիկայում»,	բ) Հենրի Մանչինի,
3. «Ամարկորդ»:	գ) Միշել Լեգրան,
	դ) Էնիո Մորիկոնե,
	ե) Ֆրանսիս Լե:

(3) **Առաջադրանք №34.**

Որոշեք համապատասխանությունը մյուզիքլների և դրանց կերպարների միջև.

1. «Փարիզի Աստվածամոր տաճարը»,
2. «Իմ հիասքանչ լեդի»,
3. «Վեսթսայդյան պատմություն»:

ա) Ենսի,

ծ) Էսմերալդա,

գ) Քրիստինա,

զ) Էլիզա,

ը) Մարիա:

(3) **Առաջադրանք №35.**

Որոշեք համապատասխանությունը հնագույն երաժշտական գործիքների և երկրների միջև.

1. Ավլոս,	ա) Չինաստան,
2. Սարանգի,	բ) Եգիպտոս,
3. Էրխու:	գ) Ճապոնիա,
	դ) Հնդկաստան,
	ե) Հունաստան:

Առաջադրանքներ №36-40.

«Ճշմարիտ է-Սխալ է»

Հրահանգ: Որոշեք տրված դրույթը ճշմարիտ է թե սխալ, եթե համարում եք, որ դրույթը ճշմարիտ է, ապա նշեք X նշանը համապատասխան վանդակում, նման դեպքում մեկնաբանություն անել չի պահանջվում, իսկ եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա համապատասխան վանդակում դրեք X նշանը և հատկացված տեղում գրեք ճիշտ բացատրությունը:

Սխալ դրույթի դեպքում, տրված բացատրությանը համապատասխանեցրեք ճիշտ տերմին/բառ կամ տրված տերմինի/բառի համար գրեք ճիշտ բացատրություն:

Հաշվի առեք, որ չի ընդունվի այն պատասխանը, ուր տրված բացատրության դրական ձևը կփոխվի բացասականի կամ ընդհակառակը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

Առաջադրանք №36.

«Rubato» երաժշտության մեջ նշանակում է հնչողության աստիճանական նվազում:

Առաջադրանք №37.

Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի «Կախարդական սրինգ» օպերայի լիբրետոն գրված է գերմաներենով:

Առաջադրանք №38.

«Մետրը» երաժշտության մեջ որոշում է ստեղծագործության կատարման արագությունը:

Առաջադրանք №39.

Ջովաննի Բատիստա Պերգոլեզին օպերա buffa ժանրի հիմնադիրն է:

Առաջադրանք №40.

Քրիստոֆ Վիլիբալդ Գլյուկը ռոմանտիզմի ներկայացուցիչ է:

Առաջադրանքներ №41-42.

Ժամանակագրության որոշում

<u>Հրահանգ:</u> Ժամանակագրական առումով՝ հնագույնից դեպի նորագույնը դասավորեք թվարկացանկը: Պատասխանների աղյուսակում ժամանակագրական հաջորդականությունը նշված է թվանշաններով՝ 1-ից մինչև 4-ը: Պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում, ընտրված թվանշանի երկայնքով, գրեք ճիշտ պատասխաններն այբուբենի համապատասխան տառերով (ա, ծ, գ, զ): Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

Առաջադրանք №41.

Ժամանակագրական առումով դասավորեք երաժշտական դարաշրջանները/ուղղությունները.

ա) Ռոմանտիզմ,

բ) Ռենեսանս,

գ) Միջնադար,

դ) Էքսպրեսիոնիզմ:

Առաջադրանք №42.

Ժամանակագրական առումով դասավորեք վրաց դիրիժորների թվարկացանկը, նրանց գործունեության ժամանակաշրջանների համաձայն.

ա) Զազա Ազմաիփարաշվիլի,

բ) Զանսուղ Կախիձե,

գ) Օդիսեյ Դիմիտրիադի,

դ) Եվգենի Միքելաձե: